


ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք երկրորդ, Երևան, «Արմավ», 2022, 308 էջ:



«Արմավ» հրատարակչությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով և ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորմամբ լույս է ընծայել Ա. Աղաայանի «Արվեստի պատմություն. կերպարվեստ» ուսումնական ձեռնարկի երկրորդ գիրքը, որն ամփոփում է պլաստիկ արվեստների համառոտ պատմությունը եվրոպական Վերածննդի շրջանից մինչև XX դարի սկիզբ: Ձեռնարկի առաջին գիրքը (2020 թ.), որ ներկայացնում է կերպարվեստի զարգացման ընդհանրական պատկերը նախապատմական շրջանից մինչև ուշ միջնադար, արդեն արժանացել է մասնագետների դրական արձագանքին¹: Առաջիկայում կիրառական արվեստի վերջին՝ երրորդ գիրքը՝

նվիրված XX դարի գեղարվեստական մշակույթին:

Թեև գրախոսվող հատորը, ինչպես և ողջ ձեռնարկը, նախատեսված է արվեստի դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար, այն, անկասկած, օգտակար կլինի նաև մասնագետ և արվեստասեր ամենալայն հասարակությանը: Գրքի հեղինակը՝ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն, այժմ՝ գիտական ղեկավար, ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղաայանը վաստակաշատ գիտնական է, որը 1970-ական թվականների վերջերից լրջորեն զբաղվում է նոր և նորագույն հայ կերպարվեստի համակողմանի ուսումնասիրությամբ և հրապարակել է նրա առանձին պատմաշրջաններին, զանազան խնդիրներին, նշանավոր դեմքերին նվիրված բազում աշխատանքներ: 2009-ին նա, հանրապետության անվանի մասնագետների (Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան) հեղինակային կոլեկտիվի կազմում, արժանացավ ՀՀ պետական մրցանակի՝ «Հայ արվեստի պատմություն» ստվարածավալ աշխատության համար, նույն թվականին հրատարակեց «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարում» հիմնարար և պահանջարկ վայելող մենագրությունը: Եթե սրան զումարենք գիտնականի բեղուն մանկավարժական բազմամյա գործունեությունը Երևանի գեղարվեստի պետա-

¹ Տե՛ս Դիուխանյան Ա. 2021, Սպասված դասագիրք՝ կերպարվեստի մասին, Գիտություն, N 6 (354), էջ 7-8, Քամայան Մ. 2021, Արարատ Աղաայան, Արվեստի պատմություն. կերպարվեստ, գիրք առաջին, Երևան, «Արմավ», 2020, 256 էջ, Արվեստագիտական հանդես, N 1 (5), էջ 220-224:

կան ակադեմիայում ու Երևանի պետական համալսարանում, մշտական մասնակցությունը մասնագիտական հանձնաժողովների աշխատանքներին, բազմաթիվ մագիստրոսական թեզերի և շուրջ մեկ ու կես տասնյակ պաշտպանված թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը, ապա ակնհայտ է, որ Ա. Աղասյանը հենց այն գիտնականն է, որն առավել արդյունավետ պետք է կյանքի կոչեր կերպարվեստի պատմության դասագիրքն առաջին անգամ հայերեն շարադրելու դժվարին և շնորհակալ գործը:

Իհարկե, տարածական արվեստների անցած պատմական ուղին հայերեն ներկայացնելու փորձեր նախկինում ևս եղել են: Այդպես՝ 2003 թվականին «Ձանգակ-97» հրատարակչությունը թարգմանաբար տպագրեց «Արտասահմանյան երկրների արվեստի պատմություն» դասագիրքը (Ն. Կուզմինայի և Ն. Մալցևայի խմբագրությամբ), որի ռուսերեն բնօրինակը լույս էր տեսել դեռևս 1971 թվականին: Վերնագրից արդեն պարզ է, որ այն ունի որոշակի ընդգրկում՝ ի տարբերություն գրախոսվող ձեռնարկի, որը ներառում է ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ կերպարվեստի պատմության նյութը: Բացի այդ, հրատարակվելով ավելի քան հիսուն տարի առաջ, դասագիրքն այսօր հնացել է և չի կարող լիարժեք բավարարել նման հրատարակության առջև դրվող գիտատեղեկատվական և կրթական պահանջները: Դրան է կոչված Ա. Աղասյանի աշխատությունը, որը, կրկնենք, համընդհանուր և հայ կերպարվեստի պատմությունն ի մի բերելու և հայերեն, այն էլ՝ անհատապես շարադրելու անդրանիկ աննախադեպ փորձն է:

Որպես այդպիսին, այն կապված է մի շարք դժվարությունների և մասնագիտական մեծ պատասխանատվության հետ: Պատմագեղարվեստական հսկա, անծայրածիր նյութի մեջ կողմնորոշվելու, իմացածն ընդհանրացնելու և համակարգելու, հարյուրավոր հեղինակներից ու հազարավոր հուշարձաններից ճիշտ, հիմնավոր ընտրություն կատարելու, գրական անթիվ աղբյուրները խելամոռեն գործադրելու, վերջապես, մտքերը ստույգ և հակիրճ բանաձևելու անհրաժեշտությունը լուրջ մարտահրավեր է ցանկացած, այդ թվում՝ բազմահմուտ արվեստաբանի համար, որից տվյալ պարագայում պահանջվում են ոչ միայն լայն և խոր գիտելիքներ, ոչ միայն բացահայտ վերլուծական ծիրք, այլև հետազոտական հմտություն ու գեղագիտական անվրեպ ճաշակ: Ու թեև շատերիս հայտնի են արվեստի պատմությունը անհատապես լուսաբանելու դասական, ժամանակի քննությունը բռնած փորձեր (օրինակ, Է. Գոմբրիխի «Արվեստի պատմություն» բազմիցս վերահրատարակված աշխատությունը կամ Մ. Ալպատովի «Արվեստի համընդհանուր պատմություն» և Ն. Դմիտրիևայի «Արվեստի համառոտ պատմություն» եռահատորյակները), յուրաքանչյուր ոք, որ ձեռնամուխ է լինում նման գործի, ստիպված է վերստին, նորովի լուծել բոլոր վերոնշյալ խնդիրները՝ ելնելով այժմյան լսարանի կրթական ու ճանաչողական պահանջմունքներից:

Այն, որ դա միանգամայն հաջողվել է Ա. Աղասյանին, կասկած չի հարուցում: Գիրքն արդիական է իր բովանդակությամբ և նյութի մատուցման եղանակով, բայց նաև պահպանում և շարունակում է ակադեմիական արվեստագիտության լավագույն, առավել կենսունակ ավանդույթները՝ մեկտեղելով գիտական շտեմա-

րանի կուռ ամբողջականությունն ու խոհագրության անկաշկանդ ոճը, դասագրքի օբյեկտիվությունն ու ինքնուրույն հետազոտության թարմ հայացքը:

Հատորը ծավալուն է՝ շուրջ 20 տպագրական մամուլ: Այն բաղկացած է յոթ գլուխներից, որոնք բաժանվում են ենթագլուխների: Առաջին չորս գլուխները հաջորդաբար ներկայացնում են XIV–XIX դարերի եվրոպական կերպարվեստը՝ առաջատար ազգային դպրոցների (Իտալիա, Նիդերլանդներ, Գերմանիա, Ֆլանդրիա, Հոլանդիա, Իսպանիա, Ֆրանսիա, Անգլիա) պլաստիկական ստեղծագործության օրինակով: Հինգից յոթերորդ գլուխները բովանդակում են XVIII–XIX դարերի ռուս, ինչպես նաև XIX դարի և XX դարասկզբի հայ կերպարվեստի ընդհանրական պատմությունը: Գրքի նման կառուցվածքը բխում է թե՛ ժամանակագրական և թե՛ տրամաբանական անհրաժեշտությունից. ընթերցողը նախ ծանոթանում է նոր եվրոպական արվեստի զարգացմանը, հիմնական միտումներին, բացահայտում կերպարվեստի տարբեր ձևերի (որմնանկար, հաստոցային պատկեր, մոնումենտալ և մանր քանդակ, գծանկար, տպագրանկար ևն), տեսակների (գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա), ժանրերի (թեմատիկ պատկեր, դիմանկար, նատյուրմորտ ևն) կազմավորումը նախասկզբնական համատեքստում, այնուհետև միայն անցնում ռուս և հայ արվեստի պատմությանը, որն այդ փուլում սերտորեն կապված էր արևմտյան երկրների մշակութային փորձի իմաստավորման և յուրացման հետ: Հեղինակը պատճառաբանված, սահուն անցումներ է կատարում ընդհանուրից մասնավորը, հնարավորություն տալիս հասկանալու գեղարվեստական գործընթացների ընթացքն ու բնույթը, հետևելու ազդեցություններին: Դա հատկապես կարևոր է նոր և նորագույն շրջանների պատմության պարագայում, երբ եվրասիական մայրցամաքն ընդլայնում և բազմազանում էր ներքին մշակութային կապերը, իսկ եվրոպական արվեստի նմուշները փորագրանկարի կամ այլ տեսքով թափանցում էին աշխարհամասի տարբեր անկյուններ:

Էջ առ էջ, բաժին առ բաժին, գլուխ առ գլուխ քննելով ստեղծագործ անհատների, երկրների, տարածաշրջանների գեղարվեստական ժառանգությունը՝ Ա. Աղասյանն ի ցույց է դնում պլաստիկական մտքի համապարփակ փոխակերպումը, որն ստանում է տեղային տարբերակումներ: Ոճական նոր ուղղությունների, մարդու և բնության գեղագիտական ընկալման նոր եղանակների առաջացումը ներկայանում է իբրև կապակցված և շարունակական մի ընթացք՝ նույնքան բարդ, որքան և հետաքրքիր: Այս ամենը մատուցվում է պատմամշակութային լայն համատեքստում, հասարակական կյանքի, պատերազմների, ժողովրդական և կրոնական շարժումների, քաղաքացիական ցնցումների ֆոնին, և մենք ականալից տեղափոխվում ենք հեռավոր ու համեմատաբար մոտ անցյալում ապրած մեր նախնիների կենսական ապրումների, հույզերի, խնդիրների դաշտ: Դրանով գրքի հեղինակը ևս մեկ անգամ հաստատում է արվեստագիտության հումանիտար էությունը, արվեստի կապը մարդու հոգևոր և պրակտիկ գործունեության ամենատարբեր ոլորտների հետ, մինչդեռ պատմական ուշա-

գրավ էքսկուրսները զուգահեռաբար կատարում են իրենց անմիջական՝ ուսուցողական գործառնությամբ:

Գրքի կարևոր արժանիքներից մեկը նրա համապարփակ, ամբողջական բնույթն է: Այսպես, օրինակ, խոսելով XIX դարի հայ կերպարվեստի անցած ուղիների մասին, ձեռնարկի հեղինակն անդրադարձ է կատարում հայության ոչ միայն արևելյան, այլև արևմտյան հատվածի՝ Օսմանյան Թուրքիայի սահմաններում բնակվող մեր հայրենակիցների պլաստիկական ստեղծագործությանը, որը մեզանում համեմատաբար վերջերս և մեծապես հենց Ա. Աղասյանի ջանքերով է դրվել գիտական ակտիվ շրջանառության մեջ: Բացի այդ, գրքում պատշաճ տեղ է հատկացված XVIII–XIX դդ. ռուս կերպարվեստին, որն այդ ժամանակաշրջանում (հատկապես XIX դարերի կեսերից սկսած) իր գեղագիտական արժանիքներով ու պրոֆեսիոնալ մակարդակով չէր զիջում Եվրոպայի առաջատար դպրոցներին: Ըստ Ա. Աղասյանի՝ վերջիններիս ուրույն դեմքը նույնպես ի հայտ էր գալիս տեղական ավանդույթների և արտաքին ազդեցությունների բարդ, բազմաբնույթ համախառնության շնորհիվ, որը և ծնեց եվրոպական նոր մշակույթի տարածական ձևերի ողջ տեսանելի բազմազանությունը:

Գիրքը հագեցած է փաստական նյութով, սակայն չի թողնում ծանրաբեռնված, խայտաբղետ տպավորություն: Շարադրանքը ստույգ է և օբյեկտիվ, միաժամանակ՝ պարզ և մատչելի ցանկացած շահագրգիռ, նաև պատանի ընթերցողի համար: Ձեռնարկը գրված է գեղեցիկ, հարուստ հայերենով, և հոգ չէ, որ երբեմն ստիպում է դիմել բառարաններին. ի վերջո, լեզվական կրթությունը հանրակրթության հիմքն է, ընդհանուր մշակույթի գլխավոր նախադրյալն ու պայմանը:

Բայց և այնպես գրքի ստեղծողներն ամեն ինչ արել են, որ այն ընթերցվի ըստ հնարավորին հեշտ, առանց խոչընդոտների: Նկատի ունենք հատորի ամենայն խնամքով և բարեխղճությամբ կազմած տեղեկատվական ապարատը, որը ներառում է անձանոթ բառերի և հասկացությունների բացատրական բառարան, ինչպես նաև անհրաժեշտ ծանոթագրություններ պատմական անցքերի, մշակութային երևույթների, գեղարվեստական երկերի վերաբերյալ: Զետեղվելով լուսանցքներում և կտրուկ տարբերվելով հիմնական շարվածքից վառ կանաչով՝ այդ տեղեկություններն իսկույն աչքի են զարնում, արագ կողմնորոշում էջի բացվածքում: Կրթական լրացուցիչ գործառնությամբ են կատարում դարձյալ լուսանցքներ դուրս բերված արագ արձագանքման սովորաքանակ գաղտնագրերը (QR-codes), որոնք ընթերցող սարքի (սմարթֆոն, պլանշետ) միջոցով կուղղորդեն դեպի արվեստի պատմությանը նվիրված ուսուցողական, գիտահանրամատչելի և այլ տեսանյութեր: Գրքի յուրաքանչյուր բաժին ամփոփվում է ստուգիչ հարցերով և առաջադրանքներով՝ կոչված բացահայտելու սովորողի գիտելիքներն ու վերլուծական կարողությունները, որոշելու նյութի յուրացման աստիճանը: Տեքստային մասին հաջորդում է հանձնարարելի գրականության ցանկը՝ 19 անուն հայալեզու, ռուսալեզու և օտարալեզու աղբյուր: Ինչպես և ձեռնարկի առաջին գրքում, այստեղ ևս շարադրանքն ուղեկցվում է մեծաթիվ (շուրջ 350) որակյալ գունավոր վերատպություններով, որոնք ներկայացնում են

XIV–XX դարերի եվրոպական, ռուս և հայ կերպարվեստի առավել կարևոր, քրեստոմատիական օրինակները՝ երկի հեղինակի, վերնագրի, ստեղծման տարեթվի և ներկայիս պահման վայրի պարտադիր նշումով: Գրքի հարուստ բովանդակությանը միանգամայն համապատասխանում է նրա գրավիչ արտաքին տեսքը, հաջող ձևավորումը, որն իրականացրել է նկարիչ Ա. Ուրուտյանը:

Այսպիսով, մեր առջև խիստ անհրաժեշտ, իր գիտակրթական նպատակներին լիովին ծառայող և, միաժամանակ, օգտագործման մեջ հարմար, գեղեցիկ ու շքեղ հրատարակություն է, որը, անկասկած, կունենա մեծ պահանջարկ: Ուստի, ամփոփելով, կուզեինք մեր երախտագիտության ու գովեստի խոսքը հղել գրքի հեղինակ Ա. Աղասյանին, ինչպես նաև բոլոր նրանց, ում հոգատար ջանքերով այն ընծայվեց ընթերցողներին:

ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու